ԿԱՐԾԻՔ

Արմինե Արարատի Գաբրիելյանի «Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը (տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը, գործառութային-ձևաբանական դասակարգումը, գեղարվեստական հարդարանքը)» Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Արցախի Տիգրանակերտի շուրջ 15-ամյա հնագիտական ուումնասիրության ներկա մակարդակը հնարավորություն է ընձեռում ներկայացնելու մ. թ. ա. 1-ին դարում հիմնադրված քաղաքի դերի կարևորությունը Տիգրան Մեծի ծավալուն և բազմաբնույթ քաղաքաշինական գործունեության մեջ, արժևորելու այն պատմաքաղաքական և պատմամշակութային ժառագականության համատեքստում: Այս բազմաշերտ հուշարձանի տարբեր շրջափուլերին նվիրված յուրաքանչյուր ուսումնասիրություն անվերապահորեն լրացնում է հնավայրի ամբողջական պատկերը, նպաստում ճշտել նրա ունեցած տեղը հայ հոգևոր և նյութական մշակույթի զարգացման համայնապատկերում:

Ներկայացված ատենախոսությունը նվիրված է Արցախի Տիգրանակերտի պեղումներով ձեռք բերված անտիկ խեցեղենի ուսումնասիրությանը: Տիգրանակերտի հնագիտական արշավախմբի անմիջական մասնակից, պեղող հնագետ Արմինե Գաբրիելյանն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դնում այս մեծածավալ հնագիտական նյութը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության, հապավումների, քարտեզների և աղյուսակների ցանկերից, քարտեզներից և աղյուսակներից: Ատենախոսության երեք հիմնական գլուխների և 15 ենթաբաժինների վերնագրերն արդեն հուշում են, որ իրականացված է ծավալուն աշխատանք:

Ատենախոսության ներածության մեջ տրվում է աշխատանքի ընդհանուր բնութագիրը՝ թեմայի նպատակը և խնդիրները, արդիականությունը, գիտական նորությունը, ուսումնասիրվածության մակարդակը, հետազոտության մեթոդաբանությունը:

Առաջին գլխում ներկայացվում է Տիգրանակերտի անտիկ խեցեղենի պատրաստման տեխնոլոգիական գործընթացը և տեխնիկական հնարները՝ ընդգրկելով փուլ առ փուլ՝ հումքի ընտրությունն ու նախապատրաստումը, իրերի պատրաստման գործընթացը, արտադրանքի չորացումն ու մակերեսի մշակումը, թրծումը: Իրականացված այդ-օրինակ մանրամասն քննությամբ առանձնացվում են խեցու հիմնական խմբերը, բացահայտվում է պատրաստի արտադրանքի լիարժեք տեխնիկական բնութագիրը:

Արմինե Գաբրիելյանը ատենախոսության երկրորդ գլխում նախ անդրադառնում է ժամանակագրությանը, հիմնավորում է տվյալ խեցեղենի թվագրման հնագիտական կռվանները: Քաղաքի հարավային ծայրամասում բացահայտված երեք մշակութային շերտերի ժամանակագրական կանոնավոր հերթագայության համաձայն՝ քննվող խեցեղենը թվագրվում է ուշ հելլենիստական՝ մ. թ. ա I - մ. թ. I դարերով և ուշ անտիկ՝ մ. թ. II - III դարերով: Այս շերտերից հայտնաբերված խեցեղենը՝ ըստ ձևակազմության, պատրաստման տեխնիկական չափորոշիչների և գեղարվեստական հարդարանքի հնարների, որոշակիորեն տարանջատվում է մշակութային 3-րդ՝ վաղմիջնադարյան շերտի՝ մ. թ. IV - VII դարերի խեցեղենից: Հեղինակը զատորոշիչ օրինաչափություններ է ընդգծում նաև անտիկ՝ 1-ին և 2-րդ շերտերին բնորոշ՝ համապատասխանաբար՝ գունազարդ և դեղնականաչավուն խեցանոթների միջև: Տիգրանակերտի խեցեգործական արտադրանքի առավել հստակ թվագրմանը մեծապես նպաստում են նաև քաղաքի հիմնադրման ժամանակի որոշակիությունը՝ մ. թ. ա 1-ին դար, կարասային թաղումներից հայտնաբերված դրամները, կնիք-մատանիները, համաժամանակյա հուշարձանների աղերսները:

Հեղինակի ընդունած դասակարգման սկզբունքների համաձայն՝ Տիգրանակերտի մ. թ. ա I - մ. թ. III դարերի անտիկ խեցեղենը բաժանվում է 7 հիմնական կատեգորիայի (օր.՝ 1. շինարարական, 2. մթերքի պահպանման և վերամշակման անոթներ, 3. Խոհանոցային, սեղանի սպասք և այլն), սրանք իրենց հերթին ըստ ձևաբանական հատկանիշների՝ ստորաբաժանվում են տեսակների, տիպերի, տարբերակների, որն էլ հեղինակը անվանում է «գործառութային-ձևաբանական դասակարգում» (օր.՝ 1. Շինարարականը՝ աղյուսներ, կղմինդրներ, փողրակներ, 2. մթերքի պահպանման և վերամշակման անոթները՝ կարասներ, կճուճներ, պուլիկներ, ձձումներ և այլն): Ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրը ներկայացվում է մանրամասնորեն, նկարագրվում և բնութագրվում է համաժամանակյա աղերսների ընդգրկուն հենքի վրա:

Արմինե Գաբրիելյանը բացահայտում, թվագրում և ներկայացնում է նաև ներմուծված խեցեղեն՝ ամֆորա, ամֆորիսկ, կանթարոս և այլն, որոնց բեկորային վիճակն ու սուղ քանակությունն անգամ հնարավորություն են տալիս տեսնելու՝ Տիգրանակերտը ներգրավված փոքրասիական և Միջերկրայքի առափնյա հելլենիստական կենտրոնների առևտրատնտեսական և մշակութային ոլորտում:

Ատենախոսության երրորդ գլխում նույնքան մանրաքննին ներկայացված է անոթների նաև գեղարվեստական հարդարանքի իրականացման եղանակների վրա հիմնված դասակարգումը (օր.՝ 1. Գունազարդում, 2. փորագրազարդում, 3. Դրոշմազարդում և այլն), որոնք ևս իրենց հերթին դասդասված, խմբավորված են (օր.՝ 1. Գունազարդումը՝ երկրաչափական, բուսական, ֆիգուրատիվ և այլ զարդապատկերների): Սրանցից

յուրաքանչյուրը ևս ստորաբաժանվում է մի քանի ենթախմբերի՝ըստ առանձին զարդամոտիվների և դրանց դասավորության:

Առանձին ենթաբաժին է նվիրված գունազարդ խեցեղենի ակունքներին, աղերսներին, տեղական հնավանդ ազդեցություններին: Հեղինակը նշում է Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենի սերտ առնչությունները հատկապես իրանական համանման խեցեղենի հետ, այստեղ տարածված գունազարդման հայտնի ոճական դրսևորումների հետ:

Նյութի աշխատատար և մանրազննին վերլուծության գործընթացում ատենախոսը, հնարավորության սահմաններում, կատարել է նաև տեղական և ներմուծված արտադրանքի տարբերակում, տեխնիկական հնարների և ոճերի ծագման հնարավոր կենտրոնների բացահայտում (ըստ հեղինակի՝ հստակեցում): Այս առումով ուշագրավ է հատկապես՝ ողկուզակիր անոթների քննությունը: Սա սև, հայելափայլ ատաքինով խեցեղեն է՝ ներքուստ դրոշմազարդ ողկուզակիր գոտիներով հարդարված: Հայաստանում՝ բացի Տիգրանակերտից, ողկուզակիր անոթներ դեռևս վկայված չեն, թերևս ի բացառյալ Սյունիքի Աղիտուից հայտնաբերված մի բեկորի, որն ըստ Մ. Զարդարյանի՝ գուցե Տիգրանակերտից է ներմուծված: Հեղինակը անդրադարձել է նաև սևափայլ խեցեղենի արտադրության հետ կապված բարդ տեխնոլոգիական հարցերին, օգտագործել պետրոգրաֆիկ անալիզների արդյունքներ՝ փաստագրելով ողկուզակիր անոթների կավային հումքի ծագումն այս նույն տարածաշրջանից: Սույն խնդրին ցուցաբերած այդօրինակ համակողմանի մոտեցման արդյունքն է՝ ձևի, կիրառական նշանակության, զարդապատկերի ամբողջկանության մեջ դիտված այս անոթները համարել՝ Տիգրանակերտի տեղական արտադրանք:

Հեղինակն առկա խեցեղեն արտադրանքի քննությամբ՝ բացահայտում է նաև տեղի բնակչության բարեկեցիկ կենցաղի որոշակի մակարդակի նկարագիրը, նրա կենսապահովման գյուղատնտեսական ավանդական ճյուղերի զարգացման պատկերը և այլն:

Նյութի նմանօրինակ բազմակողմանի ուսումնասիրության շրջանակներում արծարծված որոշ հարցերի շուրջ՝ կամենում եմ ատենախոսի ուշադրությանը ներկայացնել հետևյալ դիտարկումները, որոնք, կարծում եմ, առաջիկայում՝ հատկապես սույն աշխատանքը հրատարակության նախապատրաստելիս, հեղինակին կընձեռնեն առավել ընդգրկուն եզրահանգումների հնարավորություն:

1. Ըստ հեղինակի՝ իրավամբ, ակնառու է դառնում Տիգրանակերտի անտիկ խեցեղենի նույնականությունը Կուրի աջափնյակի խեցեղենի հետ, ընդգծվում, շեշտվում է Կուրի աջափնյակի առանձնակի մշակութային կերպարը, տեսանելի է դառնում Կուրի աջափնյակի էթնիկ բաղադրիչի ինքնատիպ նկարագիրը:

Այսուհանդերձ, գտնում ենք, որ քննվող տարածաշրջանի էթնիկ նկարագրի խնդիրը՝ սոսկ հնագիտական տվյալների առկայությամբ չի կարող ստանալ իր հիմնավոր լուծումը: Առկա մշակութային ընդհանրությունը դեռևս բավարար հիմք չի ընձեռում էթնիկ իրողությունների առավել հստակ պատկեր վերականգնելու համար: Էթնոգենեզին/ցեղասերմանը առնչվող հարցերի իրավացի լուծումը՝ հնագիտականից զատ, պատմագրական, լեզվաբանական, մարդաբանական և մի շարք այլ գիտակարգերի տվյալների հատման տիրույթում է հնարավոր իրականցնել:

2. Գունազարդ խեցանոթների ծիսապաշտամունքային բովանդակության հորինվածքները վերլուծելիս, սրանց կենսունակությունը և շարունակելիությունը բացահայտող աղերսների համադրությամբ՝ ատենախոսը անդրադառնում է նաև տեղի բնակչության հոգևոր մշակույթին առնչվող հարցերին:

Գունազարդ խեցեղենի զարդամոտիվների և հորինվածքների խորհրդանշական և իմաստաբանական քննությունն առավել լիարժեք կլիներ, եթե իրականացվեր ժամանակին բնորոշ աշխարհայեցողական ըմբռնումներին համապատասխան հենքի վրա: Ուրվագծելով խեցեղենի պատկերագրության ենթատեքստում սքողված պաշտամունքային հավաքական նկարագրի ընդհանուր պատկերը, կարծում ենք, որպես արդյունք՝ հեղինակը կունենար բնակչության պաշտամունքային պատկերացումների՝ բնության կենսական ուժերի զարթոնքի, արգասավորության-պտղաբերության և նմանօրնակ այլ որոշակի ոլորտների մեկնաբանության առավել լայն հնարավորություն:

Վերոնշյալ դիտարկումները բացարձակորեն չեն ստվերում սույն աշխատանքի գիտական կարևորությունը: Կատարված աշխատանքը արժևորվում է, քանզի որոշակի ժամանակագրական շրջանակներում զատորոշված Արցախի Տիգրանակերտի անտիկ խեցեղենը, ինքնին լինելով թվագրման գործոն, կապող օղակ է դառնում վաղհելլենիստական և վաղմիջնադարյան խեցեգործական արտադրանքի միջև, հնարավորություն է ընձեռում հետևելու անտիկ խեցեղենի անընդմեջ զարգացմանը:

Աշխատանքում ընդգրկված մեծաքանակնակ խեցեղենը (շուրջ 40 հազար և ավելի բեկոր) քննարկվում է աղբյուրագիտական լայնածավալ և հիմնավոր հենքի վրա՝ Արցախի Տիգրանակերտի շրջակա և հարակից տարածքների և, ընդհանրապես, Հայկական լեռնաշխարհի հնավայրերի, Իբերիայի անտիկ քաղաքների, հյուսիսմերձսևածովյան, արևելամիջերկրյածովյան և հատկապես իրանական աշխարհի համաժամակյա կենտրոնների՝ գիտական շրջանառության մեջ գտնվող նյութերի ընդգրկումով: Ընդ որում՝ տվյալ խեցեղենը հետազոտվում է՝ տեխնոլոգիական մեթոդների կիրառման, պետրոգրաֆիկ անալիզների և ժամանակակից գիտական գրականության ընձեռած տվյալների համադրությամբ: Մասնագիտական հնարավոր բազմակողմանի քննությամբ՝ ներկայացված է խեցեղենի տեխնիկատեխնոլոգիական բնութագիրը, իրականացված է

խեցեղենի գործառական-տիպաբանական և գեղարվեստական հարդարանքի մանրամասն դասակարգում:

Այսինքն՝ առաջին անգամ շրջանառության մեջ դրվող տվյալ հնագիտական նյութը լիարժեքորեն համակարգված է, համալրված է քննվող տարածաշրջանը ներկայացնող անհրաժեշտ քարտեզներով, նյութը համակողմանիորեն արտացոլող նկարներով և համեմատական աղյուսակներով (կցված է լուսանկարների և գծանկարների 64 աղյուսակ):

Ներկայացված սեղմագիրը և հեղինակի 6 աշխատությունները լիովին արտահայտում են ատենախոսության բովանդակությունը:

Գիտական բարեխղճությամբ, մասնագիտական բծախնդրությամբ և հետևողականությամբ կատարված սույն ատենախոսությունը համապատասխանում է Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար գործող պահանջներին, որի համար միջնորդում ենք ինստիտուտին կից գործող մասնագիտական խորհրդին տալ Արմինե Արարատի Գաբրիելյանին իր հայցած գիտական աստիճանը, որին նա միանգամայն արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և
ազգագրության ինստիտուտի ավագ
գիտաշխատող՝ պ.գ.թ. Գ.Գ. Քոչարյան

Պ.գ.թ. Գ.Գ. Քոչարյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և
ազգագրության ինստիտուտի
փոխտնօրեն՝ պ.գ.թ. Ա.Ա. Բոբոխյան

09. 03. 2020 թ.